Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
հոկտեմբերի 20-ի նիստի N 42
արձանագրային որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ»

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները,

առաջնորդվելով 2014 թվական հոկտեմբերի 10-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածի չորրորդ պարբերության դրույթներով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը միանում է «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից իրականացնելու վերաբերյալ վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի կողմից ստանալու օրվանից, բայց ոչ շուտ, քան «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2015 թվականի դեկտեմբերի 2-ին մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, հանդիսանալով սույն Արձանագրության ավանդապահը, Եվրասիական տնտեսական միության յուրաքանչյուր անդամ պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**
/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝	**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**
/ստորագրություն/	/ստորագրություն/